

Լ. Մ. Ամալյան

ԲՆՈՒՐԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայերեն ձեռագիր բառարանները օգտագործվել են նախասովետական շրջանի մի շարք հայ բառարանագիրների (Երեմիա Մեղրեցու, ՆՂԲ-ի հեղինակների, Գ. Փեշտմալճյանի, Ղ. Ալիշանի և այլոց) կողմից, նրանց բառարանների համար աղբյուրներ հանգիսացել: Սակայն տպագիր բառարանների հեղինակները տարբեր մոտեցում ու վերաբերմունք են ցուցաբերել դեպի հին բառարանները, տարբեր չափերով օգտվել նրանցից:

Մխիթար Սեբաստացին լավ ծանոթ էր հին բառարաններին, բայց այդ բառարանները նա որպես աղբյուրներ չընգտնեց իր բառարանների համար, որովհետև նրանք աղքատ են բառերով, գրված են «միաբառ մեկնությամբ»: Մեկնությունները խրթին ու հաճախ անհասկանալի են և, վերջապես, հին բառարանների վրա նա չհիմնվեց «վասն անհամար սխալանաց սպրգելոց յանհմուտ զըրչաց կամ տպագրութենէ»¹: Վերջին՝ «տպագրութենէ» բառի տակ նա նկատի ունի, անշուշտ, Երեմիա Մեղրեցու բառարանը: Սեբաստացու բառարանում հանդիպում են հին բառարանների մի շարք բառեր, բայց դրանք քաղված են մատենագրությունից, մեկնված հեղինակի կողմից և կապ չունեն հին բառարանների հետ:

Ղևոնդ Ալիշանն, ընդհակառակն, իր «Հայաբուսակ»-ի համար լայնորեն օգտվել է Ամիրզովլայի «Անգիտաց անպէտ», «Բառք Գաղիանոսի», «Թարգմանություն դեղոց» և այլ միջնադարյան բժշկական բառարաններից:

Հին բառագրքեր օգտագործել են նաև Նոր Հայկազյան բառարանի հեղինակները: Նրանք, խստագույն ընտրությամբ, ձեռագիր բառարաններից վերցրել են գլխավորապես այն բառերը, որոնք վկայված են մատենագրությամբ, սակայն հին բառարաններում հանգես են գալիս իմաստային ալ նշանակությամբ, որպես տարբերակներ ու նրբերանգներ կամ էլ բոլորովին այլ իմաստներով, որպես հոմանուններ: Նոր, մատենագրական այլ երկերով չվկայվող, անվավեր բառեր հին բառարաններից ՆՂԲ հեղինակները վերցրել են բացառիկ դեպքերում, երբ նրանք այդ բառի աղավաղված կամ սխալ գրչագրված լինելը չեն կասկածել:

Ձեռագիր բառարաններից վերցված բառերի կարելի է հանդիպել նաև Գ. Փեշտմալճյանի «Բառգիրք հայկազեան լեզուի» բառարանում:

Սակայն հին բառարաններից բավական բծախնդրությամբ օգտվող անցյալի հայ բառարանագիրները, այնուամենայնիվ, հնարավորությունների սահմաններում, բանասիրական ու մեթոդական անհրաժեշտ հմտություն չեն դրսևորել ձեռագիր բառարաններից օգտվելիս: Նրանք, նախ ձեռքի տակ ունեցել են ձեռագիր բառարանների սահմանափակ թվով գրչագրեր, ապա եղածներից էլ ընտրել են միայն լավագույնները, հիմք ընդունել առանձին գրչագրեր, իրար

¹ Մխիթար Արքա, Բառագիրք Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1749, էջ 4:

հետ չեն բաղդատել միևնույն բառարանի՝ իրենց հայտնի բոլոր գրչագրերը, որոնք իրարից զգալիորեն տարբերվում են հեղինակման ու խմբագրության վիճակով և գրչագրական-ուղղագրական որակով: Այդ պատճառով էլ ձեռագրերից տպագիր բառարանների մեջ շատ բառեր մտել են վրիպակներով ու աղավաղումներով և այդպես էլ նույնությամբ անցել հիտազա տպագիր բառարաններին, որոնց հեղինակները ծանոթ չեն եղել ձեռագիր բառարաններին:

Այժմ, երբ առկա են միևնույն հին բառարանների տարբեր ժամանակների ու խմբագրությունների անհամեմատ ավելի մեծ թվով գրչագրեր, հնարավոր է ուղղել ու ճշգրտել տպագիր բառարանների՝ հին բառարաններից եկող գրեթե բոլոր վրիպակներն ու աղավաղումները՝ գրչագրերի բաղդատական հետազոտության ճանապարհով:

Ձեռագիր բառարանների շատ բառեր մտել են նաև Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ի մեջ. Հին բառարանների տարբեր գրչագրերի և Արմատական բառարանի բաղդատումը ցույց տվեց, որ հին բառարաններից շատ բառեր Արմատականի մեջ են մտել գրչագրական վրիպակներով, աղճատված ու աղավաղված ձևերով: Այդ բառերի մի մասը հնարավոր է ճշգրտել ու սրբագրել ձեռագրերի օգնությամբ:

Բերենք օրինակներ:

Արմատական բառարանում (հատ. Ե, էջ 1260) կա «Ռամաս» գլխաբառը՝ «լուր. 2. գաւառապետ» մեկնությամբ: Իրականում ինչ էլ այդ «ռամաս» բառը, որ իրարից բոլորովին տարբեր ու հեռու երկու իմաստ ունի «լուր» և «գաւառապետ»: Այդ պարզելու համար դիմենք «Բառքերթողականք» բառարանին: Նրա մի քանի գրչագրեր (№№ 4149, 8198, 529, 2019, 2369, 3106 և այլն) Արմատականի հիշյալ բառահոգվածի դիմաց ունեն ուղղակի «Ռամասալար-գաւառապետ»: Այլ գրչագրեր նույն մեկնությամբ՝ գլխաբառն ունեն «ռամասալար», «ռամսալար», ապա, մյուսները՝ գլխաբառի սխալ գրչությամբ ունեն «ռամասալուր», «ռամասլուր», «ռամսլար», «ռամսաշար», «ռամսար», «ռամասհուր» ձևով և վերջապես երկու ձեռագրերում աղճատված է գլխաբառը՝ նրանցից մեկը (№ 7014) ունի «Ռամաս. հուր, գաւառապետ», իսկ մյուսը (№ 7250)՝ «Ռամաս. լուր կամ գաւառապետ»: Եթե նախորդ ձեռագրերը, որոնց համարները ցույց չտրվեցին, գլխաբառը դնում են վրիպակներով, բայց ամբողջական և հասկանալի է, որ այն «ռամասալար» պիտի լինի, ապա վերջին երկու ձեռագրերում գլխաբառն աղճատվել և անճանաչելի է դարձել, բաժանվել երկու մասի, նրանից անջատվել է «դար», իսկ սխալ գրությամբ՝ «լուր», «հուր» մասը և «գաւառապետ» բառի կողքին դարձել մեկնող բառ՝ գլխաբառի մնացած «ռամաս» մասի հաջորդի շատակված № 7250 գրչագրից կամ նրա հետ մի մայրօրինակից ընդօրինակված անհայտ ձեռագրերից է այդ բառն հասել Արմատական բառարան: Պահլավերեն «ռամ» (ram) և «սալար» (salār) բառերից բարդված «ռամասալար» բառի երկու բաղադրիչներն էլ առանձին-առանձին կան Արմատական բառարանում: Ուրեմն, «ռամասալար» բարդ բառը պետք է բերվեր բառարանում առկա «ռամ» և «սալար» բառերի տակ, բայց քանի որ նա գրչագրերում աղճատվել է, դարձել անճանոթ, ինքնուրույն բառ, ապա առանձին տեղ է գրավել Արմատական բառարանում:

Այդպես է պատմությունը նաև «անարգատ» բառի հետ: Արմատական բառարանում (հատ. Ա, էջ 289) կա՝ «Անարգատ» տիպ? կամ անձրև», հայտնի չէ, թե ինչ է ուղում ասել: Այո, հայտնի չէ «անարգատ» բառը և թե ինչու է

նա մեկնվում իմաստներով այնքան հեռու «տիպ» և «անձրև» բառերով: Սակայն «Բառք յունարէն» բառարանը պարզում է ամեն ինչ, նա Արմատականի հիշյալ բառահոգվածին համապատասխան ունի՝ «Անարդատիպ-անձև»: Գլխարա-
որ «անարդ» («արդ» բառը «ան» ժխտական նախածանցի հետ) և «տիպ» բա-
ռերից է կազմված և հիրավի նշանակում է «անձև»:

Երբեմն գեթ մի տառասխալի ուղղումն էլ բավական է բառի ճիշտ ձևը վերականգնելու համար: Արմատական բառարանի Ա հատորի 392 էջում կար-
դում ենք «Աշխ» մարդ և անասուն», պետք է ուղղել աշխարհ», Արմատակա-
նում սխալ է գլխաբառը, նրա մեջ պարզապես պետք է ուղղել միայն մի տառ՝
«շ»-ն դարձնել «ղ»: Այդ տառերը գծագրությամբ նման են իրար և ձեռագրերում
հաճախ են շփոթվում: Ուղղելուց հետո կունենանք «աղխ», որը և նույն մեկ-
նությունը գտնում ենք «Բառք քերթողականք» բառարանում՝ «Աղխ—մարդ և
անասուն»:

Որքան էլ անհավատալի ու տարօրինակ թվա, թե վերոհիշյալ կարգի անճշ-
տություններ, այն էլ ոչ թե հազվագյուտ ու պատահական այլ բավական զգալի
քանակով, տեղ են գտել Հ. Աճառյանի նման մեծագործ գիտնականի կազմած
բառարանում, այնուամենայնիվ, դա փաստ է, որի կողքով չի կարելի անտար-
բեր անցնել:

Սակայն Արմատական բառարանի մեջ ամեննին էլ որակ չկազմող սպր-
դումները, իհարկե, հետևանք են մի հիմնական պատճառի, այն, որ ձեռագիր
բառարաններից Արմատականին անցած բառերը վերջինիս մեջ են մտել ոչ թե
ուղղակիորեն, ձեռագրերից, այլ անուղղակի ճանապարհով, Երեմիա Մեղրեցու
«Բառգիրք հայոց» տպագիր բառարանի միջոցով: Արմատական բառարանի
հեղինակը, որ իր այդ անղուգական աշխատությունը կերտել է հայոց լեզվին
ու նրա պատմությանը վերաբերվող բոլոր նյութերի համապարփակ գումարու-
մով, ամբողջ հայ մատենագրության ու պարբերական հրատարակությունների
օգտագործումով, ցավոք սրտի, ժամանակ չի ունենցել օգտվելու ձեռագիր
բառարանների հարյուրավոր գրչագրերից:

Երեմիա Մեղրեցու բառարանից նա վերցրել ու իր Արմատական բառա-
րանի մեջ է մտցրել ավելի քան 1200 բառ, որպես նոր, անվավեր բառեր, ցույց
տալով նրանց աղբյուրը «ունի միայն բառ. Երեմ.», «գիտե միայն բառ. Երեմ.»
«այսպես ունի բառ. Երեմ.» և նման նշումներով, երբեմն էլ, միաժամանակ, հը-
ղելով Փեշտմալճյան և այլ բառարաններին:

Ձեռագիր բառարանների գրչագրերի համեմատական հետազոտությունից
պարզվեց, որ Մեղրեցու բառարանից Արմատականին անցած բառերի շուրջ
մեկ հինգերորդ մասը, եթե ոչ ավելին, ակնբախ թերություններ ունի: Ձեռագրե-
րի օգնությամբ հնարավոր է այդ բառերը ազատել գրչագրական ու տպագրա-
կան վրիպակներից, վերականգնել նրանց սկզբնական ձևերն ու բառիմաստը:
Եվ Արմատական բառարանի այդ բոլոր սպրդումները գալիս են այն բառա-
րանից, որի շատ իրավացի ու խիստ քննադատությունը տվել է ինքը՝ Հ. Ա-
ճառյանը, իր առաջաբանում: Ահա թե ինչպես է նա գնահատում Մեղրեցու
բառարանը՝ «Մանրամասն քննելուց հետո աշխատությունը տեսա, որ մեծա-
զույն մասամբ վրիպակների մի հավաքածու է այն»²:

2 Հ. Աճառյան, Հայերեն Արմատական բառարան, հատ. է, Երևան, 1935, էջ 11.

Ապա՝

«Այս բոլորից հետևում է, թե պետք է շատ զգուշությամբ վերաբերվել՝ սույն բառգրքի հետ և նրա հիշած ձևերը իբրև ճշմարտություն չընդունել: Այսպես արի էս էլ և բառերը ուշադիր քննելուց հետո, եթե կեղծ չգտա, անցկացրի իմ բառարանի մեջ, այն էլ միշտ իբր կասկածելի և անստույգ»³:

Ներսես Ակինյանը, 1930 թ. Արմատական բառարանին նվիրված իր գրախոսականում⁴ նշելով, թե «նա (Աճառյանը,—Հ. Ա.) տված է աշխատություն մը, որ կը մնա աննախընթաց օրինակ, նույնիսկ համաշխարհային գրականության մեջ»⁵, ապա թվելով բառարանի բոլոր արժանիքները, միաժամանակ անում է մի քանի դիտողություններ:

Խոսելով Արմատական բառարանի անստույգ «նորագյուտ», բառերի մասին, Ակինյանը գտնում է, որ այդ բառերից շատերը «պիտի ճշտվեն, նաև ջնջվեն, եթե անոնք ընտրելագույն ձևագիրներու հետ բաղդատությամբ ստուգվեն»⁶, ապա ավելացնում է, որ Աճառյանն այդ կարող էր անել էջմիածնի մատենադարանի ձեռագրերի օգնությամբ: Նա անհրաժեշտ է համարում «ճշտել բառերը լավագույն ընթերցվածներու վրայեն», որով հնարավոր կդառնար «վերականգնել բառերի սկզբնական ձևերը»: Իսկ Մեղրեցու բառարանի «գտագործման կապակցությամբ Ակինյանը դրում է. «Աճառյան, երբ վճռած է շահագործել բառգիրքս, պետք էր անդադարձած ըլլալ տպագիր օրինակին աղճատումներուն և փորձեր վերականգնել հին բառգիրը ձևագիրներու ուսումնասիրությամբ»⁸:

Ակինյանի այդ իրավացի պահանջները շատ լավ դիտակցում էր Արմատական բառարանի հեղինակը: Իր բառարանի առաջաբանում նա Ակինյանին պատասխանում է.

«Հ. Ակինյան, իր քննադատության մեջ Արմատական բառարանին (Հ. Ա. 1930, էջ 486—7) պահանջում է, որ այս նորագյուտ բառերը ես ստուգեի էջմիածնի և Երևանի ձեռագրասրահի 8000 ձեռագրերի վրա: Բայց ինչու՞ չստուգեի նաև Վիեննայի, Վենետիկի, Նրուսադեմի, Նոր Զուղայի, Պոլսի Անտոնյան միաբանության և այլ տասնյակ հազարավոր ձեռագրերի վրա: Եվ ինչու՞ միայն այդ նորագյուտ բառերը ստուգեի և ոչ թե ամբողջ հայերեն բառերը: Լավ կլինի անշուշտ: Բայց կարելի է մարդուց ալոբան բան պահանջել: Այդ գործը թողնում եմ ապագա հայերենագետներին, քանի որ նյութը արդեն պատրաստ է»⁹:

Միանգամայն իրավացի էր Հ. Աճառյանը: Մատենադարանում պահվող ձեռագիր բառարանների հարյուրավոր գրչագրերի ու միաժամանակ Ե. Մեղրեցու բառարանի բաղդատական հետադոտությունը մեծ աշխատանք ու ժամանակ է պահանջում: Նորից անցնենք օրինակներին: Արմատական և ձեռագիր բառարանների, մեզ անհրաժեշտ, համապատասխան բառահոգվածների առադրությամբ կազմված է ստորև բերվող ցանկը: Այդ ցանկի ձախ կողմում բեր-

³ Ընդգծումը մերն է:

⁴ Նույն տեղում, էջ 12:

⁵ Եձանդես ամսօրյա, 1930, էջ 482—498:

⁶ Նույն տեղում, էջ 484:

⁷ Նույն տեղում, էջ 487:

⁸ Նույն տեղում, էջ 492:

⁹ Հ. Աճառյան, նույն տեղում, էջ 10:

վում են Արմատական բառարանի՝ դիտողությունների ենթակա բառահոգվածներն, առանց Երեմիա Մեղրեցու բառարանը վկայակոչող նշումների, իսկ աջ կողմում՝ ձեռագիր բառարանների համապատասխան բառահոգվածները, աղբյուրների անունները նշող հապավումներով և մեր համառոտ պարզաբանումներով ու դիտողություններով հանդերձ:

Արմատական բառարանի բառահոգվածները, որոնք նույնությամբ վերցված են Ե. Մեղրեցու բառարանից:

1. Արբեկ «խիստ կամ քաջ կամ առավել»:

2. Բանիւն «թնթիւն ահեղ»:

3. Կորշումն «յորջորջումն կամ վշտալից»:

4. Հոյ «ցից կամ ցեց». երկու իմաստներից մեկն անշուշտ սխալ է:

5. Ղամբատ «լոտիկարել». ինչ լինելը հայտնի չէ:

6. Մակու և մակ «կուսան», բայց տես մաղկու:

7. Մամիր կամ մաքիր «հաւ». երկու ձևերից մեկը սխալ է:

8. Մառ «ժողովումն», որից մանրասէր «ժողովասէր». երկու ձևերից մեկը վրիպակ է:

նույն բառահոգվածները ձեռագիր բառարաններում:

Արէգ—խիստ կամ քաջ, նաև «Արէգ—մեծ կամ առաւել կամ լոյս» (Բառ. քերթ.)¹⁰:

Բոմբիւն—թնդիւն ահեղ (Բառ. քերթ.):

Կոշումն—յորջորջումն (Բառ. քերթ.):

Հոյ-ցեց (Բառ. քերթ.): Ձեռագրերում չկա «ցից» իմաստը:

Ձեռագրերում այդ բառերով կան երկու առանձին բառահոգվածներ.

ա) Ղամբատող—լեզուանի.

բ) Ղոտիկարել—շատախօսել (Բառ. քերթ.): Մեղրեցու բառարանում կա նաև «Ղոդեկարել — շատախօսել» բառահոգվածը:

Ուրեմն Արմատականի երկու բառերի իմաստներն էլ հայտնի են դառնում:

Մակու—սան (Բառ. քերթ.): Մեղրեցու մոտ բառահոգվածն աղավաղված է: Միայն մեկ ձեռագրում է հանդիպում «կուսան» բառը, մնացած բոլոր ձեռագրերն ունեն վերևում բերված բառահոգվածը՝ «Մակու—սան» կամ «Մաղկու—սան»:

Մաքիր—Հաւ (Բառ. եբր.)¹¹: Ճիշտ է «մաքիր» ձևը, որ կա Աստվածաշունչում՝ «Եւ որդիք Մաքիրայ որդւոյ Մանասէի ծնան յերանս Յոյսեփայ» (Մենդ. Ծ. 23, նաև՝ թու. լԲ. 39, Յեսու Ժէ. 1. Դատ. Ի. 14, Բ թագ. թ. 4, 5):

Մառնասէր—ժողովասէր — (Բառ. քերթ.): Այսպես է ձեռագրերի մեծ մասում, հետևաբար վրիպակ է «մանրասէր»-ը:

¹⁰ «Բառք քերթողականք» բառարանը, ձեռ. № 4149, էջ 280բ—343բ:

¹¹ «Բառք եբրայեցւոց» բառարանը, ձեռ. № 4149, էջ 262ա—279ա:

9. Մառ «խոշ». ինչ լինելը հայտնի Մառ—խոշ (Բառ. երբ.):
10. Յամաք «ուղղութիւն». արդյոք վրիպակ է յաճում բառից: Այո, «յամաք»-ը վրիպակ է «յաքում» բառից: Ձեռագրերում կա «Յաքում—ուղղութիւն» (Բառ. քերթ.), նաև «Յաքում—պատրաստութիւն կամ ուղղութիւն» (Բառ. երբ.):
11. Ներդող «դաւաճանօղ»: Նենդող—դաւաճանող (Բառ. ջաք.)¹²
12. Նկլէ «շպետ» (իմա՝ «հովիւ»): Նեկաթ—շպետ կամ խաշնատես կամ հովիւ (Բառ. քերթ.): Գլխաբառը ոչ թե «նկլէ», այլ «նեկաթ» պետք է լինի:
13. Շողնագոյն կամ շողնադոյն «սիրողագոյն». Լրկուսից մեկը վրիպակ է: Շողնագոյն—սիրողագոյն, սիրագոյն (Բառ. քերթ.): Ուրեմն վրիպակ է «շազանագոյն» բառը:
14. Ուրջու «խորհուրդ», որ կարծեմք շփոթված է ուրու և ուրջու բառերը: Ուրջու—խորթ (Բառ. քերթ.):
15. Յիծ «իր», բայց կասկածում եմ, որ վերևի ցլի «ծիրտ» բառից վրիպակ լինի: Ձեռագրերում կա միայն՝ «Յի-ծիրտ» (Բառ. քերթ.): Ուրեմն «ցիծ—իր» վրիպակ է, ավելորդ բառահոգոված:
16. Փաղաւ «սերմ», որի հետ նույն պետք է լինի փառ «սերմ»: Ձեռագրերում կա միայն՝ «Փաղաւ-սերմ»: «Փառ-սերմ» բառահոգվածն ավելորդ է:
17. Փայլփարել «սփռփել, փաղաքշել, փարել»: Փա փայլել—սփռփել (Բառ. քերթ.):
- Վերևում բերված ցանկում, որպես օրինակներ, ձեռագիր բառարաններից մենք վերցրինք միայն այն բառահոգվածները, որոնք ձևով ու բովանդակությամբ միևնույն են տվյալ ձեռագիր բառարանի գրեթե բոլոր գրչագրերում կամ, առնվազն, նրանց մեծ մասում:
- «Բառք քերթողականք» բառարանի Մատենադարանում եղած գրչագրերի և Ե. Մեղրեցու բառարանի առանձին մասերի բաղդատումը ցույց տվեց, որ վերջինիս բոլոր վրիպումներն ու աղճատումները հնարավոր է ուղղել ձեռագրերի միջոցով: Մենք արդեն սկսել ենք Մեղրեցու տպագիր բառարանի և ձեռագիր բառարանների համեմատական հետազոտությունը, առաջինի իսկական, ճիշտ բնագրի վերականգնման նպատակով:

¹² Ջաքարիա գրչի բառարանը, ձեռ. № 3201, էջ 116ա—132բ.